ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

12.03.2020թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 29.11.2019թ. N 649-Ա հրամանով հաստատված ծրագիրը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Խաչատրյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ Լուսինե Պապյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Ստեփանյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Անի Ղազարյանի, քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ Արման Մխիթարյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Շենավան համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, կապի և առողջապահության, ՔԿԱԳ, պաշտպանության, ընդերքօգտագործման, բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Շենավան համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Անուշ Խաչատրյան _____

Դավիթ Թամարյան _____

Լուսինե Պապյան _____

Դավիթ Ստեփանյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Անի Ղազարյան _____

Սամվել Խառատյան _____

Արման Մխիթարյան _____

Համայնքի ղեկավար՝
Մխիթար Մխիթարյան _____